ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«27» մայիսի 2024թ. № 034/27- 1811

«ԱԼՖԱԿԱՐ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
Հասցե՝ ք.Վանաձոր Նարեկացու փողոց շ.6/15,
էլ. փոստ. herminea85@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի ապրիլի 12-ին ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-24/6 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվել «Ալֆակար Տրանս» ՍՊԸ:

2024 թվականի ապրիլի 17-ից 26-ը ներառյալ սահմանվել է անգործության ժամկետ:

2024 թվականի ապրիլի 30-ին «Ալֆակար Տրանս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիրը կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով

նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

«Ալֆակար Տրանս» ՍՊԸ-ն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքով զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

«Ալֆակար Տրանս» ՍՊԸ-ին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Ալֆակար Տրանս» ՍՊԸ-ի տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Ալբերտ Բաբայան
հեռ. (095) 92-10-02